



**YEREVAN STATE UNIVERSITY  
ENGLISH PHILOLOGY CHAIR**

**ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH**

**LANGUAGE AND LITERATURE IN  
THE CONTEMPORARY PARADIGM  
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

*SCIENTIFIC JOURNAL*

**9**

Yerevan  
“Lusakn”  
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

*ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

9

Երևան  
«Լուսակն»  
2018

**Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**The Journal is published by the decision of YSU Scientific Council**

**Գլխավոր խմբագիր՝** Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,  
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

**Խմբագրական խորհուրդ՝**

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

**Editor-in –chief:** S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding  
Member of RA NAS, Honoured Scientist of RA

**Editorial Board:**

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:  
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրա-  
կան գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ,  
թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.  
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic  
spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation  
Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 8	
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ ..... 15	
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 25	
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ..... 32	
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ ..... 40	
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 47	
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
<b>ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ</b> ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 54	
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ ..... 63	
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԲՍԵՐՈՒՄ..... 69	
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ..... 76	
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 88	
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97	
<i>Նարե Զորանյան</i>	

<b>ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ</b> <b>ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ</b> .....	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

<b>THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE</b> .....	111
<i>Nare Hakobyan</i>	

<b>ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО</b> .....	123
<i>Марика Тонян</i>	

## **ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

<b>ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ</b> .....	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

<b>ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ</b> .....	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

<b>COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN</b> .....	153
<i>Jemma Militonyan</i>	

## **ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ ԵՔԱՆԱՎՈՐ</b> <b>ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ</b> .....	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

## **ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ</b> <b>ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ</b> .....	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

<b>НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА</b> .....	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

<b>ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО</b> .....	188
<i>Наре Мкртчян</i>	

## **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

<b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ</b> <b>ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ</b> .....	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՖԵՆԹՐՉԻԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անի Տեր-Պետրոսյան

*Երևանի պետական համալսարան*

Սույն հոդվածում փորձ է արվում համակողմանի ուսումնասիրել ֆենթրզիի ոճաժանրային առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով Թոլքինի և այլ գիտնականների տեսապատմական ուսումնասիրությունները այս ոլորտում: Հատուկ ուշադրության է արժանանում ֆենթրզիի տեղն ու դերը գործառական ոճերի համակարգում, որն, անշուշտ, արդիական է և հատուկ լուսաբանման անհրաժեշտություն ունի: Ֆենթրզին իր հուզարտահայտչական գնահատողական լեզվի ու գեղագիտական ներգործման ներուժի շնորհիվ ակնհայտորեն գեղարվեստական գրականության ժանրային դրսևորում է, որի հիմքում բարոյական ճշմարտության բացահայտումն է:

**Բանալի բառեր.** *Թոլքին, Ֆենթրզի, գործառական ոճ, գեղագիտություն, արքեոիպ, երևակայություն:*

## Ներածություն

Ցանկացած լեզվաբանական հետազոտություն կատարելիս առնչվում ենք բազմաթիվ ու բազմապիսի լեզվական և արտալեզվական խնդիրների, որոնք հատուկ պարզաբանման կարիք ունեն: Ասվածը վերաբերում է նաև գեղարվեստական գրականության այնպիսի ուրույն դրսևորմանը, ինչպիսին ֆենթրզի ժանրն է:

Նշված խնդիրների շարքին է պատկանում ֆենթրզիի տեղի ու դերի տարրորոշումը գեղարվեստական գրականության տարատեսակ դրսևորումների դասակարգման սանդղակում: Ընդհանուր առմամբ, ժանրի դասակարգումն առանցքային նշանակություն ունի ոչ միայն գրականագիտության ոլորտում, այլև լեզվաբանության մեջ, քանի որ գրական այս կամ այն դրսևորման ոճաժանրային պատկանելության խնդրի լուծումն ու ճիշտ դասակարգումը կարևոր դեր է կատարում լեզվական միավորների քննության գործընթացում: Գործառական ոճերի դասակարգման խնդիրը միշտ էլ տեսաբանների ուսումնասիրության կենտրոնում է եղել (Бахтин 1986; Գասպարյան et al 2011), սակայն այս հարցը շարունակում է արդիական մնալ, քանի որ լեզվի ոճագործառական համակարգը փոխվում է՝ առաջացնելով գոյություն ունեցող համակարգում համապատասխան ճշգրտումներ անելու պահանջ: Ըստ Զրբաշյանի, գրական տարատեսակ դրսևորումների դասակարգումն առաջին հայացքից պարզ է լուծելի է թվում, սակայն վերջնական արդյունքների հասնելը հեշտ գործընթաց չէ: Բանն այն է, որ կիրառվել և կիրառվում են ժանրերի դասակարգման տարբեր չափանիշներ և չափորոշիչներ, քանի որ լեզվաբանական տեսանկյունից դժվար է ճշգրիտ սկզբունքներով սահմանազատել ժանրերի տարատեսակները, որովհետև վերջիններս միմյանց հետ կապված են դիալեկտիկական կապով (Զրբաշյան, Մախչանյան 1980; Գասպարյան et al 2011):



## **Ֆենթրզիի տեղն ու դերը գործառական ոճագիտության մեջ**

Ժանրային դասակարգման սկզբունքները ներկայացնելիս Միխայիլ Բախտինը առանձնացնում է *խոսքային ժանր* հասկացությունը, որը դրսևորվում է պարզ կամ առաջնային, բարդ կամ երկրորդական ձևերով: Պարզ խոսքային ժանրերի շարքին են պատկանում խոսքային իրադրությունները, օրինակ՝ երկխոսությունները, նամակները և այլն, իսկ բարդ խոսքային ժանրերը մեծ մասամբ վերաբերում են գեղարվեստական, գիտական, հասարակական, քաղաքական տեքստային տիպերին (Бахтин 1986):

Վերոնջյալ դրույթը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է տարանջատել *տեքստի ժանր* և *տեքստի տիպ* հասկացությունները: Ռուս լեզվաբան Չերնյավսկայան նշում է, որ *ժանր* եզրույթը ավանդաբար կիրառվում է գրականագիտության ոլորտում և միտված է ներկայացնելու գեղարվեստական ստեղծագործություններին բնորոշ հատկանիշներ, իսկ ոչ գեղարվեստական, այսինքն՝ տեղեկատվական տեքստերը նկարագրելիս նպատակահարմար է կիրառել *տեքստային տիպ* եզրույթը (Чернявская 2009):

Հարկ է նշել, որ սույն հետազոտության առանցքում ֆենթրզին է, որը, ինչպես ցույց է տալիս այս ժանրի լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, օժտված է գեղարվեստական, գեղագիտական ներգործման մեծ ներուժով, որն էլ նշանակում է, որ այն *տեքստի ժանր* է: *Ֆենթրզի* եզրույթը ծագել է հին հունարեն *phainein*, այն է՝ *երևան գալ, հայտնվել* բառից: Ըստ Ֆլեյշերի, և մասնավորապես նրա *Splintered Light; Logos and Language in Tolkien's World* (1983) աշխատության՝ *phainein* բառամիավորը ծագում է հնդեվրոպական *bhā*՝ *լուսավորել* բառից: Լեզվի հետագա զարգացման արդյունքում *phainein*-ը սկսեց վերաբերել նաև լույսի տարատեսակ արտացոլանքներին: Լինելով լեզվաբան և միևնույն ժամանակ քրիստոնյա՝ Թուլքինը իր ստեղծագործությունները «արարելիս» առաջնորդվել է *մարդկություն, լույս և ճշմարտություն* սկզբունքներով, որոնք էլ համարել է աստվածայինի արտահայտում (Flieger 1983):

Թուլքինը ֆենթրզի ժանրը նկարագրելիս ընդգծում է, որ, ընդհանուր առմամբ, ֆենթրզին պետք է համարել մարդկային գործունեություն, որն անքակտելիորեն կապվում է ինչպես բանականության, այնպես էլ մարդու երազելու և պատկերացնելու ունակությունների հետ (Shipply 2000):

Ֆենթրզիի առանձնահատուկ զծերն են մտացածինը, առեղծվածայինը և միֆայինը և հենց այս առանձնահատկությունների լույսի ներքո է բացահայտվում ֆենթրզի ժանրի բուն էությունն ու գեղագիտությունը: Այս առումով, բանասեր Ռեդին մեկնաբանում է, որ յուրաքանչյուր պատմության հիմքում, այդ թվում և **ֆեթրզիի գեղագիտականի հիմքում բարոյական ճշմարտության բացահայտումն է** (Ready 1969):

Ֆենթրզի ժանրի տեսապատմական քննությունը կապված է լեզվաբանական ուսումնասիրությունների ոլորտում հատուկ տեղ գրաված խոսքաբանական գիտակարգի՝ մասնավորապես գործառական ոճագիտության և դրա շրջանակներում կատարվող գործառական ոճերի քննության հետ: Գործառական ոճագիտությունը հատկապես կարևորում է ոճ-խոսք հարաբերակցության հարցը, որն էլ իր հերթին բերում է լեզվի ոճագործական համակարգի խոսքային դրսևորումների դասակարգման անհրաժեշտությանը: Այլ կերպ՝ դարձյալ կարևորվում

է ֆենթըզի ժանրի տեղի ու դերի որոշարկումը անգլերենի գործառական ոճերի համակարգում:

Ռուսական իրականության մեջ ակադեմիկոս Վինոգրադովն էր, որ առանձնակի հետաքրքրություն դրսևորեց գործառական ոճագիտության նկատմամբ և զարգացրեց գործառական ոճերի և լեզվի գործառույթների միջև առկա կապը (Виноградов 1955):

Ըստ Վինոգրադովի տեսության՝ առանձնացվում են լեզվի հիմնական ոճերը՝ առօրյա-կենցաղային (հաղորդակցման գործառույթ), առօրյա-գործնական, գիտական և պաշտոնական-փաստաթղթային (հաղորդման գործառույթ) և գեղարվեստական (ներգործման գործառույթ): Ըստ Վինոգրադովի, ներգործման գործառույթ իրացնելուն է միտված նաև գեղարվեստական ոճին հարող հրապարակախոսական գործառական ոճը (Виноградов 1955): Վինոգրադովը գործառական ոճը սահմանում է որպես լեզվական արտահայտչամիջոցների այնպիսի համակարգ, որն ունի որոշակի նպատակաուղղվածություն և համապատասխանում է գրական այս կամ այն ժանրին, սոցիալական այս կամ այն իրավիճակին (ոչ պաշտոնական), հասարակության առանձին անդամների կամ խավերի միջև լեզվական հարաբերակցության այս կամ այն ձևին (Виноградов, 1966): Չնայած նշված տարանջատմանը գործառական ոճերը խոսքային իրավիճակներում և գործընթացներում չեն կարող դրսևորվել լիովին մեկուսի, և նրանց ներհատուկ լեզվաոճական առանձին տարրերը կարող են գործածվել այլ ոճաձևերում, այսինքն՝ գործառական ոճերին բնորոշ է փոխկապակցվածությունը (Виноградов 1966):

Շատ լեզվաբաններ խոսքի գործառույթների համակարգում առավելապես կարևորում են հաղորդման և ներգործման գործառույթները, իսկ հաղորդակցման գործառույթը համարվում է հիմնարար ցանկացած խոսքային գործունեության համար (Виноградов 1963; Чаковская 1986; Микоян, Тер-Минасова 1981):

Եթե հաղորդման գործառույթի հիմնական նպատակը իրական փաստերի և դեպքերի մասին տեղեկություն տալն է, գիտության այս կամ այն ոլորտի վերաբերյալ գիտելիք փոխանցելը, ապա ներգործման գործառույթը, հիմնված լինելով երևակայության ու հորինվածքի վրա, հիմնականում իրացվում է գեղարվեստական գրականության մեջ և իր ժանրային ողջ բազմազանությամբ հակադրվում է տեղեկատվական խոսքին և՛ ձևով, և՛ բովանդակությամբ (Разинкина 2004):

Ժամանակակից անգլերենում գիտական և գեղարվեստական ոճերը համարվում են հիմնական ոճաձևերը. դրանց միջև գոյություն ունեն անհամար և բազմազան խոսքային այլ ձևեր ու ժանրեր, որոնց սահմանազատումը պահանջում է փոխադարձ ներթափանցումների մանրակրկիտ ուսումնասիրություն (Гаспарян 2000):

Մեր ուսումնասիրության առարկան լայն իմաստով գեղարվեստական գրականությունն է կամ գեղարվեստական գրականության գործառական ոճը, որին էլ պատկանում է ֆենթըզին: Ֆենթըզին իր հուզարտահայտչական գնահատողական լեզվի ու գեղագիտական ներգործման ներուժի շնորհիվ ակնհայտորեն գեղարվեստական գրականության ժանրային դրսևորում է: Ըստ Բուդագովի՝ գեղարվեստական ոճն իր հիմքում ունի երկու կարևոր հատկանիշ՝ հաղորդակցության և գեղարվեստականության միասնություն, ընդ որում առանց դրանց առ-

կայության գեղարվեստական գրականությունը չի կարող կայանալ, քանի որ ստեղծագործության հեղինակը, անկասկած, ասելիք պիտի ունենա իր ընթերցողին, որից էլ կծնվի հեղինակի՝ նրա հետ հաղորդակցվելու պահանջը: Ապա, հեղինակը պետք է կարողանա այդ հաղորդակցումը դարձնել գեղարվեստական (կախված իր ստեղծագործական կարողություններից)՝ ապահովելով գեղարվեստական ձևի ու բովանդակության միասնություն (Бударов 1967):

Ֆենթըզի ժանրում, այդուհանդերձ, ձևի և բովանդակության նշված միասնությունն արտահայտվում է չափազանց ինքնատիպ դրսևորմամբ, քանի որ այն պատկանում է ոչ միայն գեղարվեստական ոճին, այլև դրա մտահայեցական ենթաոճին, որն էլ իր հերթին լրացուցիչ ոճագործառական պահանջներ է ներկայացնում իր ֆենթըզի ժանրին (Մուրադյան, 2017): Ինչպես գեղարվեստական ցանկացած ստեղծագործություն, այն նույնպես բառային արվեստի նմուշ է, թերևս յուրօրինակ նմուշ, օբյեկտիվ իրականության յուրատիպ գեղարվեստական վերարտադրություն, որն իրացվում է որոշակի լեզվական տարրերի ընտրության և համակցման միջոցով:

Այսպիսով, ֆենթըզին գեղարվեստական ոճի մտահայեցական ենթաոճի ներգործման/գեղագիտական գործառույթ իրացնող ինքնատիպ ժանրային դրսևորում է, քանի որ ուսումնասիրության մեջ տեղ գտած լեզվարտահայտչական միավորները, մասնավորապես միֆային խորհրդանիշ-կերպարները, ոճական հնարները, երգ-հանելուկները, լեզվամշակութային բաղադրիչները միտված են իրենց գեղագիտական ներգործությունը թողնել ընթերցողի վրա:

Լուկինը, օրինակ՝ իր հետազոտության մեջ առանձնացնում է գեղարվեստականության տարրորոշման երկու մոտեցում՝ գործառական և երևակայական (Лукин 2005):

Առաջին մոտեցման հիմնական չափանիշը համարվում է գեղագիտականը, իսկ երկրորդինը՝ հորինվածքը: Այս առումով նույնպես, ֆենթըզին լիարժեք հարում է գեղարվեստական ոճին, քանի որ ֆենթըզիի գեղագիտականը պայմանավորված է դրանում կիրառվող փոխաբերական, պատկերավոր, հուզարտահայտչական-գնահատողական տարրերով, որոնք հետապնդում են գեղագիտական ազդեցություն թողնելու և ընթերցողին գեղագիտական հաճույք պատճառելու նպատակ: Ավելին, ինչպես նշում է Բորնը, գեղարվեստականը վերնշանային հասկացություն է, որն արտացոլում է կյանքին և արվեստին վերաբերող հատկանիշներ՝ գեղեցիկը, ողբերգականը, կոմիկականը, դրամատիկականը, և այլն (- Բորն 1982):

Ֆենթըզի ստեղծագործությունները արտացոլում են վերոնշյալ բոլոր հատկանիշները՝ լեզվարտահայտչական բազմաթիվ ու բազմազան միջոցների և գեղարվեստական պատկերների միջոցով ազդելով ընթերցողի հույզերի ու ապրումների վրա, ընթերցողին հաղորդելով անիրականի, երևակայականի, գեղեցիկի հետ կապված զգացողություններ:

## **Ֆենթրզիի տեսապատմական դրույթները**

Ըստ որոշ լեզվաբանների և գրականագետների՝ Թուրքինի գեղարվեստական ստեղծագործություններն առասպելական/միֆային ակունքներ ունեն (Jones 2002; Birzer 2002):

Թուրքինը այս հանգամանքը կապում է 20-րդ դարի շվեյցարացի հոգեբան Կառլ Յունգի առասպելի վերաբերյալ կատարած հոգեվերլուծական ուսումնասիրության հետ, ըստ որի՝ առասպելները և միֆաստեղծ տարրերը «արքետիպային» արտահայտության ձևեր են: «Արքետիպերը» համարվում են մարդկային վարքագծի բնագրային կաղապարներ, որոնք, ինչպես Յունգն է կարծում, ներկայացնում են «հավաքական անգիտակցականը» (the collective unconscious): «Հավաքական անգիտակցականը» մարդկային հոգեբանության անբակտելի մասն է կազմում և համարվում մարդկային գիտակցության «բնագրային կառույց» (instinctive structure), այն ընդհանրական է՝ ունիվերսալ և հաստատուն: Առասպելաբանությունը կամ միֆայինը «հավաքական անգիտակցականի» արտացոլանքն է, որը բանական մարդու հոգեբանության և հոգեկան աշխարհին բնորոշ համընդհանուր տարր է: Հատկանշական է, որ Յունգը տարբերակում է «արքետիպեր» և «արքետիպային կերպարներ» հասկացությունները: Եթե «արքետիպերը» հանդես են գալիս մարդկային անգիտակցական մակարդակում, և գրեթե անհնար է դա ինչ-որ կերպ ներկայացնել գիտակցական մակարդակում, ապա «արքետիպային կերպարները» կարող են ի հայտ գալ երազների, տեսիլքների, երևակայության կամ ֆանտազիայի միջոցով: «Արքետիպային կերպարները» այս կամ այն չափով բնորոշ են ցանկացած մարդ-արարածին և զանազան պատկերների ու միատիկական տեսիլների ձևով հանդես են գալիս հեքիաթներում և երազներում: Ինչպես արդեն նշել ենք, «արքետիպերը» մարդուն բնորոշ համընդհանուր տարրեր են, մինչդեռ «արքետիպային կերպարները» և դրանց առաջացումը պայմանավորված են մի շարք մշակութային և անհատական-մարդկային գործոններով: Այլ կերպ՝ դրանք փոխվում են մշակույթից մշակույթ կամ անհատից անհատ անցում կատարելիս (Solopova 2009):

Այս առումով, հետաքրքրական է գիտաֆանտաստիկայի հեղինակ և տեսաբան Ուրսուլա Լե Գուինի (1979) «արքետիպի» մեկնաբանությունը, այսպես. «Մեծագույն ֆանտազիաները, միֆերը, հեքիաթները իսկապես նման են երազներին: Դրանք երկու անգիտակցականների միջև անգիտակցական-խորհրդանիշերի և արքետիպերի լեզվի միջոցով ընթացող երկխոսություններ են: Թեև դրանք կապված են բառերի հետ և իրացվում են բառերի միջոցով, այդուհանդերձ արտահայտվում են երաժշտության ձևով՝ ներթափանցելով չափազանց խորը թաքնված այն մտքերի մեջ, որոնք հեշտ չեն արտաբերվում: Տրամաբանական լեզվի առումով դրանք դժվար թարգմանելի են, բայց միայն տրամաբանությունը միակողմանիորեն ընկալող մարդը, որը կարծում է, որ Բեթհովենի *Իններորդ սիմֆոնիան* իմաստալի չէ, կարող է պնդել, որ դրանք իմաստ չեն արտահայտում: Դրանք օժտված են խորիմաստությամբ և լիովին կիրառելի են էթիկայի, ներըմբռնման, հոգեկան աճի տեսանկյունից»:

Լե Գուինի վերոնշյալ մեկնաբանությունը վկայում է, որ որ ֆենթրզին, իսկապես անգիտակցականից անգիտակցական փոխանցվող այնպիսի երազ է, որը դրսևորվում է լեզվական միավորների միջոցով: Այդուհանդերձ այդ միավորնե-

րին բնորոշ է պատկերավորությունը, բազմաձայնությունն ու երաժշտականությունը: Թեև այդ միավորները ֆանտազիայի արգասիք են, այնուամենայնիվ հիմնված են մարդկային բանականության վրա և իմաստ են արտահայտում: Դրանք հասկանալու համար բառերը բավարար չեն. այն պետք է զգալ և պատկերացնել՝ խորապես ընկղմվելով ստեղծագործության գեղագիտական ծալքերի մեջ:

Այլ կերպ՝ ֆենթերզի հեղինակը, գործի դնելով իր ստեղծագործական ողջ «լաբորատորիան», ջանում է ստեղծել մի այլ՝ մտացածին աշխարհ, որը կազմում է նրա հոգեկան ներաշխարհի մի մասը: Ներաշխարհն արտահայտվում է հեղինակի վառ երևակայության, երազելու ու պատկերացնելու ունակության շնորհիվ և նուրբ հոգեբանական թելերով է կապում հեղինակին և ընթերցողին: Բնական է, որ ֆենթերզին իր որոշակի լեզվական կոդերով/ծածկագրով արտահայտում է երկրայինի և երկնայինի մշտնջենական բախումն ու հոգեբանական բարդ փոխհարաբերությունները: Եվ հենց յունգյան համամարդկային «արքետիպի» գաղափարը կիրառելով՝ Թուլքինը հասավ մեծ հաջողության հատկապես ֆենթերզի ժանրում՝ շոշափելով համամարդկային հոգեբանության ֆանտաստիկ ծալքերը:

Համընդհանուր այն կարծիքը, որ առասպելը (ավելացնենք՝ նաև ֆենթերզին) պարզապես «հաճոյական պատրանք» է՝ գրականագետ Էլիադը իր «Առասպել և իրականություն» (*Myth and Reality*, 1975/1998) աշխատության մեջ, քննարկելով է այն միտքը, որ վաղնջական հասարակություններում առասպելը նշանակում էր «ճշմարիտ պատմություն», նշում է, որ դա մի պատմություն է, որի հիմքում աստվածայինն է, օրինակելին և նվիրականը: Էլիադը ավելացնում է, որ առասպելն իր մեջ պարուրում է կենդանի ուժ, որն արտահայտվում է մարդկային վարքագծի միջոցով՝ իմաստ և արժեք հաղորդելով աշխարհիկ կյանքին: Հենց այս իմաստն ու արժեքն են մերձեցնում ֆենթերզին առասպելին (Eliade 1963):

Ջարմանալի չէ, որ Թուլքինի ֆենթերզին անհրաժեշտություն է 20-րդ և 21-րդ դարերի մարդու համար, որ ներկայիս անհատն ու հասարակությունը նոր, ժամանակակից այնպիսի ստեղծագործությունների կարիք ունեն, որոնք գոյաբանորեն կապում են աստվածային-բարեպաշտական և մարդկային օրենքները՝ ուղղորդելով մարդկությանը աշխարհիկ կյանքում:

Գրականագետ Թիմերմանը գտնում է, որ ֆենթերզի ժանրը նկարագրելիս անհարժեշտ է կիրառել աստվածաբանական եզրույթ-հասկացություն, այն է՝ անագոգիք ներհայեցում (anagogic insight), այսինքն՝ խոհրդավոր ներհայեցում, որը վերաբերում է հոգևոր աշխարհին և իրացվում է գեղարվեստական հնարների և խորհրդանիշների միջոցով (Timmerman 1983):

Թիմերմանը ավելացնում է, որ Թուլքինի ֆենթերզի ստեղծագործությունները նաև արտացոլում են երկրորդ համաշխարհային պատերազմի անդառնալի մարդկային կորուստները: Թուլքինի ֆենթերզին կարծես ներկայացնում է պատերազմի չարագույժ հետևանքները մարդկության հոգեկան աշխարհի վրա: Այս առումով, Թիմերմանը, որպես սպացույց, բերում է Թուլքինի «Հորիթ» ստեղծագործության մեջ տեղ գտած գոբլինների նկարագրությունը.

*Goblins are cruel, wicked, and bad-hearted. They make no beautiful things, but they make many clever ones. .... It is not*

*unlikely that they invented some of the machines that have since troubled the world, especially the ingenious devices for killing large numbers of people at once, for wheels and engines and explosions always delighted them, and also not working with their own hands more than they could help. (p.70)*

Վերոնշյալ հատվածում Թոլքինը բացահայտում է 20-րդ դարում ծագած ահարկու պատերազմի և այն նախաձեռնած ուժերի էությունը: “Հոբիթ”-ում այդ խելացի, բայց մարդասոց արարածները գորիհններն են, որոնք ստեղծել են մարդկություն զանգվածային ոչնչացման հնարամիտ միջոցներ՝ մեքենաներ, շարժիչներ և այլն: Ստեղծագործության հերոսները պայքարում են գորիհների դեմ՝ աշխատելով ոչնչացնել աշխարհի անդորրը խաթարող արարածներին:

### **Եզրակացություն**

Այսպիսով, ֆենթերզին մի ինքնատիպ ժանր է, որի միջոցով ընթերցողը ընդլայնում է երևակայության սահմանները՝ բառային արվեստի խորքերում թաքնված ճշմարտությունը գտնելու ակնկալիքով: Անգլերեն լեզվի գործառական համակարգում այն հանդես է գալիս գեղարվեստական ոճին պատկանող ժանրի կարգավիճակով՝ իրացնելով իր առաջնային, ներգործման/գեղագիտական գործառույթը: Միևնույն ժամանակ պատկանելով գեղարվեստական ոճի մտահայեցական ենթաոճին՝ այն ինչ-ինչ որակներով մերթ ընդ մերթ կարող է հարել տվյալ ենթաոճում իր հետ ժանրային կարգավիճակը կիսող այլ ժանրերի (գիտաֆանտաստիկա, առեղծված և այլն), ինչպես նաև առասպելին և հեքիաթին:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Բորև, Յ. (1982) *Գեղագիտություն*. Երևան: «Հայաստան» հրատ.:
2. Գասպարյան, Ս.; Սուրադյան, Գ.; Գասպարյան, Ն. (2011) *Գործառական ոճագիտություն*. Երևան: ԵՊՀ հրատ.:
3. Զրբաշյան, Էդ.; Մախչանյան, Հ. (1980) *Գրականագիտական բառարան*, Երևան:
4. Eliage, M. (1963) *Myth and Reality*. USA: Harper & Row Publishers.
5. Le Guin, U. (1979) *The Language of the Night: Essay on Fantasy and Science Fiction*. Ultramarine Publishing.
6. Flieger, V. (2002) *Splintered Light, Logos and Language in Tolkien's World*. Kent: The Kent State University Press.
7. Shipplly, T. (2000) *J.R.R. Tolkien Author of the Century*. Boston, New York: Houghton Mifflin Company.
8. Ready, W. (1968) *The Tolkien Relation: A Personal Inquiry*. Chicago: Regnery.
9. Jones, L.E. (2002) *Myth & Middle-Earth*. New York: Gold Spring Press.
10. Birzer, B.J. (2002) *J.R.R. Tolkien's Sanctifying Myth: Understanding Middle-Earth*. USA: ISI Books.
11. Sopolova, E. (2009) *Languages, Myths and History: An Introduction to the Linguistic Background of J.R.R. Tolkien's Fiction*. North Landing Books.

12. Timmerman, J.H. (1983) *Other Worlds: The Fantasy Genre*. Ohio: Bowling Green University Popular Press.
13. Бахтин, М. (1986) *Эстетика словесного творчества*. М.: Искусство.
14. Будагов, Р. (1967) *Литературные языки и языковые стили*. М.: Высшая шк..
15. Виноградов, В.В. (1955) *Итоги обсуждения вопросов стилистики*. // ВЯ N 1, М..
16. Виноградов, В.В. (1963) *Стилистика. Теория поэтической речи, Поэтика*. М.: Гослитиздат.
17. Виноградов, В.В. (1966) *Вопросы синтаксиса современного русского языка*. М.: Гослитиздат.
18. Гаспарян, С. (2000) *Фигура сравнения в функциональном освещении*. Ереван: ЕГУ.
19. Микоян, А.; Тер-Минасова, С. (1981) *Малый синтаксис как средство разграничения стилей*. М.: МГУ.
20. Разинкина, Н. (2004) *Функциональная стилистика (на материале английского и русского языков)*. М.: Вышш. шк..
21. Чаковская, М. (1990) *Текст как сообщение и воздействие (на материале английского языка)*. М.: Вышш.шк..
22. Чернявская, В. (2009) *Лингвистика текста: Поликодовость, интертекстуальность, интердискурсивность*. М.: Либроком.

### **Tolkien's Fantasy and Its Genre and Stylistic Manifestations**

The article focuses on the comprehensive study of the peculiar features of genre and style of fantasy based on Tolkien and other scientists' historical-theoretical researches in this field. Of special interest is the role and place of fantasy in the system of functional styles which is really actual and needs special study. The fantasy genre with emotional – evaluative-expressive overtones is the indispensable part of literature. According to many theorists the inner content of fantasy genre is the revelation of moral truth which can be illustrated in Tolkien's works by means of mythology and mythological characters.

### **Фэнтези Толкина; Жанро-Стилистические Манифестации**

Данная статья посвящена изучению особенностей стиля и жанра фэнтези на основании теоретических и исторических исследований Толкина и других ученых в данной области. Особое внимание уделяется изучению места и роли жанра фэнтези в системе функциональных стилей, который актуален и требует глубокого изучения. Выразительные и эмоциональные подтексты жанра фэнтези подчеркивают его неотъемлемую часть в художественной литературе. По мнению многих теоретиков внутренний контекст жанра фэнтези раскрывает нравственную истину, которая иллюстрируется в работах Толкина при помощи мифологии и мифологических персонажей.

## Մեր հեղինակները

**Ալինա Պետրոսյան** – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [alina.petrosyan@yahoo.com](mailto:alina.petrosyan@yahoo.com)

**Անահիտ Հակոբյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝  
[anahit.hakobyan1988@yandex.ru](mailto:anahit.hakobyan1988@yandex.ru)

**Անի Տեր-Պետրոսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [aniterpetrosyan@ysu.am](mailto:aniterpetrosyan@ysu.am)

**Աննա Կնյազյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.  
Էլ. հասցե՝ [annaknyazyan@ysu.am](mailto:annaknyazyan@ysu.am)

**Աստղիկ Մխիթարյան** – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի  
Էլ. հասցե՝ [asto7@rambler.ru](mailto:asto7@rambler.ru)

**Արեգա Համբարձումյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [orbisenglish@gmail.com](mailto:orbisenglish@gmail.com)

**Արմենուհի Մարտիրոսյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ  
Էլ. հասցե՝ [arm.martirosyan@ysu.am](mailto:arm.martirosyan@ysu.am)

**Գայանե Մուրադյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.  
Էլ. հասցե՝ [g.murad@ysu.am](mailto:g.murad@ysu.am)

**Գոհար Հարությունյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [goharharutyunyan@ysu.am](mailto:goharharutyunyan@ysu.am)

**Համլետ Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [hamlet.araqelyan@gmail.com](mailto:hamlet.araqelyan@gmail.com)

**Հասմիկ Ղաջոյան** – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikghajoyan@mail.ru](mailto:hasmikghajoyan@mail.ru)

**Հասմիկ Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikmkrтчyan@ysu.am](mailto:hasmikmkrтчyan@ysu.am)

**Մարիամ Առաքելյան** – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
Էլ. հասցե՝ [mariamarakelyan89@mail.ru](mailto:mariamarakelyan89@mail.ru)

**Մարիամ Գևորգյան** – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [miriamgevorgian@gmail.com](mailto:miriamgevorgian@gmail.com)

**Մարիանա Սարգսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marianasargsyan@ysu.am](mailto:marianasargsyan@ysu.am)

**Մարիկա Տոնյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marikatonyan@ysu.am](mailto:marikatonyan@ysu.am)

**Մարինե Մկրտչյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [m.mkrтчyan@ysu.am](mailto:m.mkrтчyan@ysu.am)

**Նաիրա Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [nairamkryan@ysu.am](mailto:nairamkryan@ysu.am)

**Նատալյա Գոնչար-Խանջյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ [natalie.goncharkhanjyan@ysu.am](mailto:natalie.goncharkhanjyan@ysu.am)



**Նարե Հակոբյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

**Նարե Մկրտչյան** – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

**Նարե Չոբանյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

**Նարե Ջաբաղյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

**Ջեմմա Միլիտոնյան** – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

**Ռուզաննա Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

**Միրարփի Կարապետյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝  
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել [afajournal@ysu.am](mailto:afajournal@ysu.am) էլ. հասցեին:



Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,  
Երևանի պետական համալսարան  
Հեռախոս՝ (+374 60) 710 546  
Էլ. հասցե՝ sedagaspanyan@ysu.am, afajournal@ysu.am

**«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ**



**Հրատարակչություն**  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)